



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի առաջին եռամսյակում (վերլուծություն)

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 36309 գործարք, որոնց քանակը 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 37.8 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 19.2 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10242 օտարման գործարքի 73.2 %-ը կազմել է առուվաճառքը, 26.3 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 32.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի առաջին եռամսյակում, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 27.5 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 9.1 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի առաջին եռամսյակում, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 43.9 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 34.5 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2015 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282600	282700
Նոր Նորք	252100	253000	252800
Ավան	260100	260400	260200
Էրեբունի	250600	251600	251000
Շենգավիթ	256100	256900	256700
Դավթաշեն	275150	275500	275200
Աջափնյակ	249400	249650	249600
Մալաթիա-Սեբաստիա	242000	242800	242500
Նուբարաշեն	154850	156500	156150
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	273400	274000	273800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 861 բնակարան, որի քանակը, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 29.6 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 22.8 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2015 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115400	116000	116000
	Ապարան	57300	57550	57550
	Թալին	65100	65900	65900
Արարատ	Արտաշատ	95400	97500	97000
	Մասիս	115000	115800	115750
	Վեդի	100100	100950	100700
	Արարատ	75300	75800	75500
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154150
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	60000	59850
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55100	55050
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Աբովյան	155100	155000	155100
	Նոր Հաճն	128600	128550	128600
	Բյուրեղավան	108150	108100	108150
	Եղվարդ	109300	109350	109400
	Հրազդան	63800	63800	63850
	Ծաղկաձոր	292500	292400	292500
Շիրակ	Չարենցավան	85500	85500	85550
	Գյումրի	109300	109200	109300
	Արթիկ	66600	66700	66700
Սյունիք	Մարալիկ	40700	40700	40700
	Գորիս	121900	122800	122500
	Կապան	92300	93450	93150
	Սիսիան	91150	91600	91300
	Մեղրի	80800	81300	81000
	Ագարակ	46900	47100	46900
	Քաջարան	94650	94600	94700
Դաստակերտ	8000	8000	8000	
Վայոց ձոր	Վայք	95000	94900	95000
	Եղեգնաձոր	124900	125500	125550

	Ջերմուկ	112600	112900	112950
Տավուշ	Դիլիջան	113150	113800	113600
	Իջևան	118300	118250	118300
	Բերդ	60200	60200	60250
	Նոյեմբերյան	49900	49850	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2015 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, մնացել են անփոփոխ:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 964 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 265 գործարք, մարզերում՝ 699 գործարք: 2015 թվականի առաջին եռամսյակում, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 35.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 40.0 %-ով, մարզերում՝ 33.4 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 8.9 %-ով, իսկ մարզերում՝ 22.1 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2015 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286600	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2015 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	90050	90050	90050

Վայոց ձոր	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Զերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4241 միավոր (2129.30 հա) հող, որից Երևանում՝ 243 միավոր (20.84 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

գյուղատնտեսական նշանակության հող՝ 2648 միավոր (1976.43 հա), որից Երևանում՝ 28 միավոր (3.29 հա),

բնակելի կառուցապատման հող՝ 1049 միավոր (117.89 հա), որից Երևանում՝ 113 միավոր (10.34 հա),

հասարակական կառուցապատման հող՝ 293 միավոր (17.42 հա), որից Երևանում՝ 92 միավոր (4.18 հա),

արդյունաբերական օբյեկտների հող՝ 45 միավոր (8.28 հա), որից Երևանում՝ 10 միավոր (3.03 հա),

առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 13 միավոր (4.19 հա),

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 193 միավոր (5.09 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի առաջին եռամսյակում օտարված հողերից 3387 միավորի (1830.05 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 207 միավոր (15.34 հա), նվիրատվության գործարք՝ 835 միավոր (261.47 հա), որից Երևանում՝ 36 միավոր (5.49 հա) և փոխանակության գործարք՝ 19 միավոր (37.78 հա):

Հանրապետությունում 2015 թվականի առաջին եռամսյակում 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 22.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 52.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 11.9 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 6.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 613.67 հա, որից 600.86 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 19.8 %-ը կամ 672 միավորը (554.38 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 59 միավոր (4.29 հա), իսկ 79.6 %-ը կամ 2696 միավորը (1274.86 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 147 միավոր (11.05 հա): 2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 19 գործարք (0.81 հա):

Ստորև ներկայացված է 2015 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	2	0.04	19	3.50	38	0.75	20	1.54	7	2.92	71	3.59	49	3.01
Արագածոտն	13	6.50	4	0.25	1	0.005	14	0.52	93	68.12	0	0.00	60	21.77	1	0.01
Արարատ	22	42.88	5	0.87	28	1.30	21	0.17	283	149.62	0	0.00	125	11.87	9	0.37
Արմավիր	44	427.48	3	0.54	1	0.01	2	0.16	238	173.38	2	0.81	95	10.87	14	0.43
Գեղարքունիք	6	5.23	1	0.74	33	3.52	9	0.88	224	105.10	1	0.13	53	6.63	5	0.43
Լոռի	4	2.89	2	0.10	24	0.94	13	0.68	532	338.46	2	0.13	18	1.53	6	0.06
Կոտայք	20	15.92	1	0.01	34	2.23	14	0.70	188	109.17	1	0.49	127	10.36	14	4.08
Շիրակ	7	12.82	0	0.00	13	0.14	6	0.08	100	109.52	1	0.03	28	3.37	6	1.07
Սյունիք	0	0.00	4	0.29	4	0.02	1	0.09	122	72.41	0	0.00	19	1.91	4	0.24
Վայոց ձոր	2	8.98	0	0.00	13	1.90	1	0.03	95	47.66	1	0.01	8	1.12	4	0.15
Տավուշ	8	1.72	4	0.35	13	0.86	23	0.48	35	8.90	1	0.03	21	1.83	7	0.94
Ընդամենը	126	524.42	26	3.19	183	14.43	142	4.54	1930	1183.88	16	4.55	625	74.85	119	10.79

Ստորև ներկայացված է 2015 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	25	0.44	2	0.04	7	0.11	16	0.29	34	3.85	0	0.00	0	0.00	12	3.39	22	0.46
Արագածոտն	3	0.015	0	0.00	1	0.005	2	0.01	24	6.76	8	6.00	4	0.25	0	0.00	12	0.51
Արարատ	7	0.02	0	0.00	0	0.00	7	0.02	66	23.21	19	20.89	5	0.87	28	1.30	14	0.15
Արմավիր	2	0.06	2	0.06	0	0.00	0	0.00	45	423.18	41	422.54	1	0.47	1	0.01	2	0.16
Գեղարքունիք	5	0.33	0	0.00	4	0.29	1	0.04	44	10.04	6	5.23	1	0.74	29	3.23	8	0.84
Լոռի	7	0.25	0	0.00	2	0.02	5	0.23	36	4.37	4	2.89	2	0.10	22	0.93	8	0.45

Կոտայք	5	0.11	0	0.00	4	0.09	1	0.02	64	18.75	20	15.92	1	0.01	30	2.14	13	0.68
Շիրակ	8	0.08	0	0.00	5	0.02	3	0.06	18	12.96	7	12.82	0	0.00	8	0.12	3	0.02
Սյունիք	4	0.096	0	0.00	3	0.006	1	0.09	5	0.30	0	0.00	4	0.29	1	0.01	0	0.00
Վայոց ձոր	1	0.03	0	0.00	0	0.00	1	0.03	15	10.88	2	8.98	0	0.00	13	1.90	0	0.00
Տավուշ	5	0.11	0	0.00	2	0.07	3	0.04	42	3.25	7	1.66	4	0.35	11	0.80	20	0.44
Ընդամենը	72	1.54	4	0.10	28	0.61	40	0.83	393	517.55	114	496.93	22	3.08	155	13.83	102	3.71

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 12 գործարք (27.49 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի առաջին եռամսյակում, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 23.8 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 41.7 %-ով, իսկ մարզերում՝ 22.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 28.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 76.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 20.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 69.2 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	4.29	74.3	748.9	497.4	54	23.81	365.0	12000.0	3695.3
Ապարան	2	0.21	1055.1	1157.7	1106.4	3	2.40	86.5	2727.3	655.3
Թալին						28	32.44	93.6	5494.5	765.4
Ծաղկահովիտ	1	1.51	191.3	191.3	191.3	7	8.95	79.5	1000.0	335.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	1.32	170.3	3100.0	1040.1	135	47.35	335.1	10833.3	2584.4
Մասիս	3	3.57	67.8	6002.2	3268.1	22	10.74	200.0	11904.8	3062.2
Վեդի	13	16.00	60.0	629.1	238.4	119	68.48	207.0	10795.1	1802.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	14	61.76	30.5	87.9	68.3	127	104.76	294.3	9090.0	1204.1
Բաղրամյան	23	358.69	73.5	1217.7	687.9	34	38.87	90.6	2561.1	865.7
Վաղարշապատ	4	2.09	84.0	1681.7	483.4	70	23.23	444.4	11764.7	1931.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	4.74	680.0	2000.0	1340.0	165	49.10	199.8	1875.0	449.1
Ճամբարակ						8	8.01	60.5	953.3	353.1
Մարտունի	3	0.40	130.0	142.4	134.2	16	1.99	51.1	2850.0	784.0
Սևան	1	0.10	1221.0	1221.0	1221.0	18	2.74	52.2	2134.8	329.8
Վարդենիս						17	43.26	41.2	2575.1	426.2
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.01	16435.6	16435.6	16435.6	63	25.94	170.4	6424.2	603.3
Գուգարք						30	6.68	234.6	6065.9	786.2
Սպիտակ						10	3.37	250.0	5555.5	705.5

Ստեփանավան	2	1.24	932.5	932.8	932.7	9	9.65	90.6	1686.6	370.5
Տաշիր	1	1.64	167.8	167.8	167.8	420	292.81	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	5	1.96	282.5	6887.9	3679.7	48	19.78	279.3	11942.7	4012.7
Եղվարդ	6	10.82	167.5	2367.1	816.0	102	64.89	174.4	11971.8	2352.9
Հրազդան	9	3.14	251.9	1050.0	622.6	35	12.30	130.5	10256.4	1208.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						32	32.95	252.0	1693.1	612.3
Ամասիա	1	3.00	151.8	151.8	151.8	5	17.76	40.9	261.0	130.0
Անի						31	32.64	110.6	546.9	446.3
Աշոցք						5	5.70	58.5	215.8	136.5
Արթիկ	6	9.82	209.0	660.0	320.6	27	20.47	79.4	1428.6	485.0
Սյունիքի մարզ										
Գորիս						12	8.10	92.6	1023.2	776.5
Կապան						9	15.18	120.0	841.6	398.3
Մեղրի						11	1.98	193.0	3000.0	750.5
Սիսիան						90	47.13	46.3	1977.4	576.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	8.98	21.7	75.0	48.4	23	14.99	125.0	10000.0	1850.0
Վայք						72	32.67	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						12	2.45	213.3	3783.8	683.3
Իջևան	3	0.94	159.7	169.5	164.4	9	1.74	267.5	9454.5	1340.0
Նոյեմբերյան	4	0.73	166.8	1650.0	725.5	14	4.72	46.7	7368.4	964.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						26	22755.3	130.7	22200.0	2585.7
Ապարան						4	3020.0	124.1	609.6	391.1
Թային						3	4241.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						1	1628.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	303.1	570.7	5547.8	3395.5	38	45329.6	173.9	7140.3	905.1
Մասիս	23	11937.7	1957.1	5082.9	3001.2	52	39424.9	187.5	25000.0	1211.6
Վեդի	2	733.6	1271.7	2500.0	1885.8	34	32893.5	126.1	5000.0	663.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	81.0	1322.2	1322.2	1322.2	32	39265.6	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						58	63335.3	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	21	27983.6	172.6	191.8	187.7	11	12535.9	186.6	1084.3	684.3
Ճամբարակ						2	5030.0	71.3	2286.2	148.1

Մարտունի	3	2844.0	165.1	376.3	270.7	29	34089.6	119.3	5000.0	284.0
Սևան	2	72.0	2200.0	2300.0	2250.0	1	99.5	240.0	3110.4	330.0
Վարդենիս	3	1436.5	66.6	172.8	123.8	9	13499.7	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	15	1536.0	244.2	1725.0	1195.6	6	5542.3	114.3	1388.9	217.4
Գուգարք						5	3434.6	77.9	14083.3	1260.4
Սպիտակ	7	7742.0	145.3	244.6	195.2	3	2850.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան						2	1770.0	88.2	1666.7	175.7
Տաշիր						2	1677.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	19	15399.0	641.0	5438.0	3457.3	64	53670.6	264.5	35353.5	1996.6
Եղվարդ	10	5232.0	2612.6	5041.5	3291.7	55	44617.7	173.6	27000.0	2866.5
Հրազդան	1	720.0	243.1	243.1	243.1	7	4472.0	117.7	34848.5	1321.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	1170.1	3235.9	6290.9	4652.4	12	11625.2	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						2	1718.1	67.9	180.6	193.0
Աշոցք						1	6750.0	40.8	144.0	65.0
Արթիկ	2	65.0	2750.0	2875.1	2812.6	13	13607.2	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	5712.0	112.2	1700.0	365.5
Կապան	1	103.0	1190.2	1190.2	1190.2	1	3800.0	67.9	2638.9	342.3
Մեղրի						6	4520.0	68.5	632.9	240.8
Սիսիան						3	4000.0	123.5	875.0	229.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	18000.0	56.7	56.7	56.7	6	8590.4	96.7	7659.6	510.2
Վայք	1	1030.0	1325.2	1325.2	1325.2	2	2650.0	120.7	1448.3	243.3
Տավուշի մարզ										
Բերդ	1	583.3	550.3	550.3	550.3	1	370.0	75.8	810.0	125.3
Իջևան	10	7379.7	1366.2	3000.0	2811.9	16	14029.7	74.1	14423.1	539.5
Նոյեմբերյան						4	3947.8	125.0	1948.1	243.5

2015 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1565 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3 %-ը:

2015 թվականի առաջին եռամսյակում, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 27.0 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 25.4 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 193 բնակարանի, 126 անհատական բնակելի տան, 718 հասարակական նշանակության, 151 արտադրական նշանակության օբյեկտի, 338 միավոր հողի, 37 ավտոտնակի և 2 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 13 վարձակալության գործարքի քանակը, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 27.8 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 13.3 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1572.91 հա հողից 1.31 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1571.60 հա հողից 1500.23 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 32.08

հա արդյունաբերական օբյեկտի, 1.42 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 744.68 հա, որից 739.20 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2984 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.2 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 56.0 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 45.5 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.4 %), անհատական բնակելի տների (22.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.9 %) և հողերի (10.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1718 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 55.6 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 41.8 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 511.38 հա հող, որից 21.08 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 91.5 %-ը կամ 468.14 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.99 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արագածոտնի մարզում՝ 154.96 հա, որից 154.02 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 223 գործարք, որից 164-ը՝ Երևանում: 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 50.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 47.3 %-ով, մարզերում՝ 56.9 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ նվազել է 42.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 37.6 %-ով, մարզերում՝ 52.4 %-ով:

2015 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 4301 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 28.3 %-ով, իսկ 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 10.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (20.5 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե